



ՇԱՐՈՒՄ

Մանուգրական տպարանի կողմից հասարակության համար 40 սխիկ վերջին երեսի համար 20 սանախով է. կրեթեկե սեղի սեղաններու համար 20 զիմ զեղը կրչույս :

Մանուգրական տպարանի կողմից հասարակության համար 40 սխիկ վերջին երեսի համար 20 սանախով է. կրեթեկե սեղի սեղաններու համար 20 զիմ զեղը կրչույս :

R. P. Kalemecarian, Mechitaristen-Gasse W. 4
 (Austria)
 Редакция на вѣстникъ Шаржума "L'Armenien"
 Redaction du journal "Charjoun"
 Varna (Bulgarie)
 (20 ՄԱՆԹԻՄ)
 Պոլիգրաֆիկ հասարակական ձեռնարկ
 = 15 ՄԱՆԹԻՄ =

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ
 ԿՐ ՀՐԱՏԱՐԱՐԱՆԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇՈՐՈՒԹ ՈՐԵՐԸ

Վառձայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇՈՐՈՒԹՄԻ ԵՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԳ ԳՐՈՒՆՈՂ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏՊՈՐ ԵՒ ԵՄԵՆԻԻ ՎՃԱՐԷ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մեր բաժանորդներն մեկ մասը չը նայած մեր յայտարարութեանց, իրենց պարտքը չը ճանչացան, ու դեռ կը շարունակեն թերթ ստանալ :

Այդ անպարտաճանաչ մնացորդներուն ժամանակ կուսանք մինչև փետրուար քսան, ու այնուհետև պիտի յայտարարենք անունները : Իսկ Պուլիգրաֆի մէջ չըլձարող բաժանորդներէն օրէնքի գիտելով պիտի գտնենք :

Եարժում միշտ զրկուած է սով ուզած է, ոչ ոքի առանց ուղելու, մանաւանդ նոր խմբագրութեան միջոցին, թերթ չէ զրկուած, եւ այդ ուղղութեամբ բոլոր նամակները պահուած են :

Բաժանորդները թող հասկնան որ խմբագրութեան թուղթի, մարտայի, տպարանի, գրաչարի տակ կը վճարէ, եւ երբ իր բաժանորդները իրենց շնչին պարտքը չեն վճարէր, խմբագրութիւնը ահագին պարտքերու տակ կ'իյնայ, թէ ինք կը վնասուի, եւ թէ իրեն հետ գրամի գործ ունեցողները :

ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՐՅԸ

Ֆ. ԴԸ ՊՐԵՍԱՆՍԷ ՎԻԿ
 ՏՈՐԻԱ-ՀԱՆԼԻ ՄԷՅԸ :

(Չիլիցիայում հրատարակվող Լա Սիլիս քիթի քիւ 43ի խմբագրականը Ա. Գ. ստորագրութեամբ) :

Ժամը ութին արդէն դահլիճը լիքն է. շատ քչ պարագ սեղեր կան. քեմից, ուր մամուլի ներկայացուցիչները համար սեղաններ կան դըրված, պատկերասրահ է գլուխները կազմված մի ծով, որը աստիճանաբար կրկնվում է նրանց քից-նրանցը, մինչև բարձր : Բոլոր գոնեքի մտքանվում են սեւամորուք, սեւաչեւայ, թխագէմ երիտասարդ Հայեր. օրւան կոչնատէրերը, որոնք քաղաքավար ու հաճոյակատար կերպով կատարում են հիւրընկալների գերբը այն սանը, որ այսօր իրենցն է :

Նուր Գ. Դը Պրեսանսէ, Պ. Ֆալտի ուղեկցութեամբ, որը բուսական նիւհարցած է իր վերջին հիւանդութենից յետոյ : Պարոն Ֆալտի նախներողութեամբ է խնդրում իր բացայայտ յոգնածութեան մասին, եւ դեռ բուսական զորաւոր ձայնով ու ոչ նւազ սքանչելի դարձվածներով ներկայացնում է Վերաուսիքի և արդարութեան այդ ասպետին : Ապա մեղամաղձօրէն վերջնում է իր սերնդի երիտասարդութեան ցնորքները եւ յայտարարու ընդարձակում Ե. Նավիլի հոչակաւոր նախադասութիւնը, մասուրապէս հետեւեալն է խօսում :

«Ինչքան էլ որ այսօր ուժը գերակշռում է իրաւունքին, այսու ամենայնիւ մենք նստած մնանք որդարութեան գոց դրան առջև ու, գուրգուրալով, մեր բոլոր ուժերը պահպանենք մի օր այդ դուռը բանալու համար :»

Յետոյ, սկսում է պարոն Պրեսանսէն, ողջունելով բուսի ծափահարութիւններով : Նա մեծ ուրախութեամբ ընդունել է այն խնդիրը, որը նրան է վստահել Եւրոպայի հայ ուսանողութիւնը, որի կեդրոնական կօմիտէն գտնվում է Ֆրէնկում : «Եւրոպայի զգայունութեան կեդրոններին մէկուած ինչպէս ինքը ասաց :

Նա արտասուք է որ ֆրանսիացի կարողացաւ օգտվել Լորանտոսերին եւ Տուբինիներին առթած վերջին դէպքից եւ չը պահանջեց Բերլինի գաղտնագրութեան գործարարը, ինչպէս նրանից պահանջում էին կարմիր Սուլթանի ճշգրտ այնքան նահանգներին եկող վշտի ու անհանգիստ ազդակները : Աւաղ, վրանսան գերագանաց սահմանափակել ծովակալ կայսրին վստահած գործը եւ այդ ծովի, ու պատերազմի մտրդին գործը դանապանի մի «պահանջ օգնական» : Պրեսանսէն Թրանսայի այս տխուր վերապահութեան մէջ որոշում է Ռուսի մատուցել, Յետոյ, հմտօրէն եւ յաջողաբար ներկայացնում է յաւիտենական Արեւելեան հարցի փուլերը իրանց պատմութիւնով, իր աստիճանաթեան այս մասը պատմութեան այն պիտի մի հիւթից դաս է, որ եւ զժամանակ կարողանամ այս տեղ պարփակել :

Թորքերի Պոլսը տիրապետելու հետեւեալ օրը, նրանք դարձան եւրոպայի սարսափը, Աստուծու պատուհասը, ինչպէս Լուսերն էր ասում : Բայց թորքերի ջանքերը փշրվեցին վիճնայի սուլու. Լեւաստանը, Ռեզարիան եւրոպայի ախոյանները հանդիսացան եւ թուրքերին եւ մղեցին :

Այս վարկանից իսկ Օսմանեան զորութիւնը սկսվում է խոնարհվել նրանց պատճառած սարսափին փոխարինում է Լեւոպական զինամասերի վախը օսմանցիներին թուլանալու համար : Աւա այդ տեղից է ծագում օսմ. պետութեան ամբողջութիւնը պահպանելու գաւառները : Այս երկրորդ փուլն է Բայց Ռուսաստանը, թուրքի ժողովրդական թշնամին, խնամակալում էր Սլաւներին, աշխատում էր մի շարք անկախ պետութիւններ կազմակերպել եւ ասոյցապահական չղթով չըջարտել եւրոպական թուրքիան : Աւա այսպէս էր որ մենք տեսանք Յունաստան, Արբիա, Բուսանիա եւ Բուլղարիա կազմակերպված պետութիւնները : Թորքական նահանգներ ոյոնք ամենքն էլ զրեթէ անկախ սզգրի վերածվեցին :

Երրորդ փուլը սկսվում է Բերլինի գաղտնագրութիւնից, որ Ռուսիան ինքզինքը զրկված դատու բալոր կողպուտներին օրոնց տիրացել էր մեծ զօրութեամբ : Այդ ժամանակից սկսած նա շարունակ մի նոր քաղաքականութեան հետեւից : Թորքիայի արողջութեան պահպանումը, բայց ի վնաս իր անկախութեան :

Ռուսաստանը ուրիշ կրկին խնամակալուհի էր պահում, բայց այս անգամ թուրքիայի խնամակալուհին : Վրա եւ համում Հայաստանի եւ Պոլսի կոտորածները : Մեծ ճիգեր պէտք էին եւրոպական Եւրոպայի շարժելու համար վերջնական նա : արժեքից, բայց այդ ծանր մեքենան կարելի էր նմանեցնել մի ծանրակշիւ շրջ ըր ձիւնի կ'ուրի, որի երկու ձիւրը ալ, երկուսը դէպի ձախ են քաշում : Սուլթանը, որ շատ խնացի մարդ է, հրաշալի կերպով օգտվեց պետութեան ի խոր դէմ ունեցած անբուժելի մաքառուից եւ զիմպրից շատ ճարպիգէն տարված ինքեքիական քաղաքականութեամբ, որը մինչև օրս էլ նրան լիովին յաջողվում է : Այդպիսով նա կարողացաւ ետ կացնել սալ այն օրինաւոր պահանջներին, որոնք լինում էին Բերլինի գաղտնագրութեան գործարարութի համար, ու ընդհակառակը, ի վրէժ, նետվեց Աֆիբայի ն քաղաքականութեան մէջ :

Հանքերի շահագործման, երկաթուղիների շինութեան եւ ուրիշ նւարակութիւնների արածուցութիւնները շարժելով, Սուլթանը յաջողեց եւրոպական կօնցիտի քաղաքականութիւնը շահել եւ հաճութեամբ հրաժարեցիկ սալ նրա ամօնանւիրական իրաւունքներից, որոնք Բերլինի

գաղտնագրութեան հետեւեալ օրերը էին : Ու անանք որ պիտանական Լօճոնգրէնը մեծ մարդասպանի գիբը նետվեց, Բաղդադի դի շինութեան արտօնութիւնը պիտեւ համար :

Միտիլինի խնդրից յետոյ, որը վերջացաւ այսպէս ասած տարփածութեան վէճով, Ֆրանսան թուրքիայի անդկալ նոր մեղրուլուսի մէջ է գտնվում եւ կարծես զգուշանում է Համիտին ձաճարացնել խոտազգված քաղաքացիներին խնդրով : Կարծը, այն դժբախտ մողղիգների պոթութիւնը, որոնք այնքան երկար յուսացին, հակառակ յոյսի, այսօր աւելի վատթար է, քան երբ եւ ից : Այնու ամենայնիւ չը պէտք է վնասվել :

Այս տեղ ասենախօսը սկսում է ներքողել այն դիւլգանութիւնը, որի ապացոյցը Հայերը ստուխ, ու պիտում է որ Հայերը ոչ միայն մարտիտներ եղան, այլեւ ճշմարիտ հերոսներ : Նրանց քաջատիրա գործունեութիւնը հաւասարվում է իրենց համբերութեան յիշում է քաղաքական ուշադրութիւններ : Յետոյ, թէկէինք սկսեցնում պատերազմը ասում է, Հայերին քաջազգիւրում է անհաշտ կոթի սկսել իրենց հարստահարների դէմ, բովհեաւ եթէ երբէք բուսութիւնը անհրաժեշտ ու արդարացի է եղել, այն էլ Հայերի ունեցած պարագայում է : Հայերը անցյալները դիւանագէտներին ներկայացրին մի չափաւոր եւ վաղը ալ ուրիշատում, պահանջելով միայն Բերլինի 61րդ յօդուածում նախատեսված ապահովութիւնները, որոնք միայն կարող են նրանց կեանքը ասնելի դարձնել, բայց ոչ թէ սզատութիւն : Յետոյ նրանք յայտարարում են որ համբարչիւ են այն աննի հետ որոնք հեծում են Համիտի արեւնոտագալտոնիտակ : Մակեդոնացիների, Ալբանացիների, եւ նայն իսկ Օսմանցիների, այդ մուշմեծ գահի հետ որին չը պէտք չիթթել Եւրոպի եւ փոչաների անգուլմ, փշած, ու փչացնող աշխարհի հետ :

Այո, պատերազմ եւ միշտ անխընայ պատերազմ, նահատակների տրիւնը թափվում է, դեռ պէտք է թափվի, բայց այս անգամ ոչ իգուր : Թուրքերը կարող են Հայերին կարել հարիւրներով, ինչպէս ասաց Արբիանու Պոլսում երկու կախվածներից մին, սրայց նրանք գաղափարը չեն կարող կախել, եւ ասում մի կախական, Սուլթանի գահի տակ մի փոս էլ է ասելայնու մն :

Թող Հայաստանը թուլ չը տայ որ իր իրատները կորչի, թմոզ նա չը յոգնի եւրոպայի երեսին ազդակ

Պ Ա Տ Ի Ժ Ը

Այսպէս, երբորդ ինչ արիւրս
 Իսկ մեզ համար, որ հեռուից դի-
 տում ենք այդ երկար մաստիքու-
 թիւնը, յիշենք որ ոչ սարսափունե-
 րին եւ ոչ որքերին գթասիրական օգ-
 նութիւնը հասցնելը բաւական չէ:
 Այնպիսի ճնշումներ գործ դնենք կա-
 ուսման թիւններին եւ նրանց ներ-
 կայացուցիչներին վրայ, որ նրանք
 վերջապէս ստիպվեն մեր պահանջնե-
 րին անդի տալ, նոյն իսկ իրենց շա-
 հի համար

Յետոյ ստանախօսք ցուցադրում
 է Եւրոպայի բարոյական տագնապի
 եւ հակայնդափոխական տրամադրու-
 թիւններին մէջ գտնվելը. Ֆրանսայի
 մէջ նացիօնալիզմի եւ Անգլիայում
 իմպերիալիզմի անուանով եւ թէ ինչպէս
 միշտ ձգտում են այնքան սուղ գնով
 ձեռք բերված ազատութիւնը յափըշ-
 տակելը, ու յայտարարում - Հայոց
 դատը եւ մեր գատն է. հրաշալի պար
 ձեւաներով Միլիտարացիի դէմ հա-
 կադրում է իսկական ազատամտու-
 թիւնը եւ փոքրիկ ազգերի սշտապէս
 պատրաստ կորուզու ակնկէթօրէն պճնա-
 զարգ մեծ պետութիւնների սնապարծ
 փարթամութեան դէմ. Աւելի պա-
 տերազմական եւ ծովային ուժերը
 պարտաւոր են ու եւ էրանի ծառայելու
 գտնէ թող այդ լինի մարդկութեան
 եւ արգարութեան ազնիւ գատերի հա-
 մար, բայց ոչ թէ միայն կասկածելի
 եւ պարտ պահանջներին:

Իր վերջաբանի մէջ պարոն Պրէ-
 սանսէն աշխատում է ապահովել իր
 այս յանձնարարական գրադեցնող Արե-
 ւելիան խնդրի ճշմարիտ լուծումը
 պէտք է լինի ինքնավար նահանգ-
 ների մի դաշնակցութիւն ստեղծելով,
 Բ. Իրան անւանակոն գերիշխանու-
 թեան տակ. Սյս լուծումը չը պէտք
 է սպասել ոչ սյսօր եւ ոչ վաղը, բայց
 ինքը համոզված է որ պայպայուս կը
 լինի:

«Արեւի կը չը կայ, վերջացնում է
 նա. մեզ մնում է միայն ամբողջ սըր-
 տով եւ բոլոր ուժերով միասին գը-
 նալ Արեւելքում պատրաստող յեղո-
 փոխութեան հերոսների հետ, ու
 կամ թէ մեծ ոճրագործի մեղսակից-
 ները լինելը»

Կրկնակի ծափահարութիւնները
 վերջանալուց անմիջապէս յետոյ, Պ.
 Թավօնը շնորհակալութիւն յայտնեց
 Ատենախօսին եւ Հայերին. սրանք
 ժրէկէն այդպիսի մի թելադրիչ ու
 գեղեցիկ երեկոյթ մատակարարեցին
 եւ ապահովացրեց որ ժրէկէի ժո-
 զովուրդը չերմ եւ գործնական հա-
 մակրութեամբ է վերաբերվում դէպի
 իրանց:

Այս խօսքերով, ժամը 9, 45-ին նիս-
 տը փակվեց. ապա հով եւ որ ներ-
 կաները անջնջլի կերպով պէտք է
 պահպանեն նրա յիշատակը:

Վ Ի Թ Ո Ւ

Նախորդ համարի մէջ «Իրա-
 ւունք»-ին ուղղուած բաց նա-
 մակներուն բաժնին մէջ նՈՅՆ
 ստորագրութիւնը գրուած է
 «Գիւլպէի Վարչութեան» ստո-
 բագրութեան տակ, փոխանակ
 Ա. Մանուկեանի եւ Պ. Հ. Պոյաճե-
 հանի նամակին ծանօթութեան
 տակ գրուելու:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Անհնարին է ինձի բառ գանել
 բացատրելու համար ինչ որ զգա-
 ցի կարգալով «Նորմալ» վեր-
 ջընթերթի թիւին այն խմբագրա-
 կանը որով հայութեան իմաց կը
 տրուէր ամենէն գարշելի, ամե-
 նէն գաւաճանական արարքը
 զոր ու է ժամանակի մէջ, ու է
 ազգի մը հոգեւոր կամ քաղա-
 քային պետը գործելու աննա-
 խընթաց վատութեամբ խոչնդած
 ըլլայ եւ որուն տխուր պիտեղ-
 նը, աւաղ, հայոց պատրիարքն
 է, տիրանուն Օրմանեանը:

Չեմ դիտեր թէ հայութիւնը
 երբ վերջնապէս քաջութիւնը
 պիտի ունենայ իր ազգի վրայ
 բացուած այս թարախտ վէրքը,
 այս որդնալից նխաթիւնը կո-
 րել նետելու:

Քոյերա մըն է աս մարդը, որ
 սողալով ճանկատուելով հասած է
 մինչեւ պատրիարքական այն
 գահոյքը որուն վրայ ներսէս-
 ներու լուսաշող ստուերները կը
 թեւածեն:

Քոյերա մըն է, որ հինգ տա-
 րի է ի վեր իր սպանիչ միքրոպ-
 ները վերէն կը թափէ հայու-
 թեան վրայ, աւելի գէշ քան
 տասը պատահանները եգիպտոսի:

Այն «հոնելի» նախատինքին
 հարուածին տակ, զոր ապակա-
 նութեան եւ խաղբութեան այս
 վիժածը կը հասցունէ մեր նոր
 ուրբերուն—Սէրէմճեանի եւ նը-
 մաններուն—փոփոզուն ու պաշ-
 տելի յիշատակին, ամբողջ հա-
 յութիւնը մէկ մարդու պէս վեր-
 ցաւ թելու եւ զանիկայ քաշկո-
 տելով չա, աչար վար առնելու էր
 այդ բարձունքն, պատառ պա-
 տառ փեթթելով անոր լերկ
 ճարպերը, եւ նշաւակումի ահեղ
 կառախտտին վրայ շարքու-
 փշուր բնելով անոր թանձր ու-
 կորները:

«Աւագայ» յորջորջել էն աղ-
 նիւ ու էն վսեմ դէմքերը զոր
 տրուած ըլլայ արտագրել ամ-
 բողջ մարդկութեան, եւ որոնց
 արգաւանդ արիւնէն կը վերըն-
 ձի զին աղքերու կտրատուած ան-
 զամները՝ հոյակապ կառուցումնե-
 րով: Անօրէնութեան, անմոթու-
 թեան եւ սրբապղծումի էն գե-
 րագրական աստիճանն է աս, ո-
 որուն ցատքեց հասաւ մեր պատ-
 րիարքը լարախաղացի դիւրա-
 շարժութեամբ, հակառակ իր լէ-
 ջի պէս ծխած եղով շաղուած,
 խոխորուած մարմնին գոմէշային
 գանդաղութեանը:

Աւանդուր ապականութիւն
 բարբերու—երեւակայել սր բո-
 լոր այն թաղական խորհուրդնե-
 րը, որոնց ուղղած էր Օրմանեան
 իր յանդիմանագրին անարգու-
 թիւնը, անձայն հլու թեամբ,
 անբողք համակամութեամբ

հանդուրժեցին իրենց երեսին
 վրայէն բովանդակ հայութեան
 նետուած այս անուր նախատին-
 քին: Ամօթ պիտի ըլլայ իրենց,
 եթէ իսկապէս ասիկա է ճշմարիտ
 իրողութիւնը: Պօլսէն եկած այդ
 յանդիմանագիրը կոխկռտելով ցե-
 խերու մէջ քաշկոտելով դէպի
 նա՛ զայն զրկողին երեսին փակ-
 ցնելէ զատ ուրիշ ինչ ընթացք
 ունենալու էին այդ թաղական
 խորհուրդները, ամէն ազատու-
 թեան սիրահար հայ թող ձեռքը
 լեզուն վրայ դնելով ըսէ՛, խնդ-
 րեմ:

Պօլսոյ հայոց պատրիարքին
 ըրածը այն տեսակ բաներն է,
 որոնք մարդկային խիցծին առ-
 ծե՛ կը նկատուին իրր հակադ-
 գային նողկալի ոճիր: Ամեն ու-
 ճիր պատժի մը կը կարուի:
 Պէտք է ուրեմն որ հայութիւնը
 պատժէ իրեն գէ՛մ գործուած այս
 ոճիրն հեղինակը, Օրմանեանը:

Եւ որովհետեւ նիւթական պա-
 տիմ մը տնօրինել առ այժմ տն-
 հնարին է, կը մնայ մեզ բարո-
 յական պատժով պատուհասել ոճ-
 րագործը:

Կ'առաջարկեմ ուրեմն որ բոլոր
 արտասահմանի հայ մամուլը—
 «Արմէնիա»ն ալ մէջը միաբերան
 նշաւակէ Օրմանեանին ինքզեանը,
 եւ եկեղեցիներու մէջ, հայ մո-
 զովուրդը, քահանաներուն հրա-
 ւէրով, անէ՛ծք կարգայ անոր
 դէմ, միեւնոյն ժամանակ վեր-
 առնելով Սէրէմճեանի եւ իր բն-
 կերներուն դիւցապնական նա-
 հատակութեան վսեմ նշանակու-
 թիւնը, ու օրհնելով անոնց սուրբ
 յիշատակը:

ՇԱՒԱՐՇ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

1902 յունուար 10 Մուշ
Սիրելի ընկեր:

Մէկ երկու ամիսներ թղթակցու-
 թեանց ընդհատումի պատճառը
 ուրիշ բան չէր, եթէ ոչ իմ բա-
 ցակայութիւնս. ինչ ինչ կարելու
 պատճառներէ հարկադրեալ հե-
 աջած էի տեղէս: Քանի որ է
 որ վերագործած եմ, ընկերա-
 կան պարտականութեան մէջ չը
 թերանալու համար, կուգամ մէկ
 երկու կարեւոր դէպքերու մա-
 սին ձեզ գրել:

Ընկեր, իմ մեհինելս յետոյ,
 Մշոյ գաշտը բոլորովին անխիա-
 նութեան կը մատնուի, հայ-
 գուկային խումբերու քուլթիւնը
 չի կրնար գոհացում տալ Մշոյ
 ընդարձակածաւալ գաշտին, ա-
 մէն տեղ յեղափոխական խում-
 բերու անհրաժեշտութեան
 պէտք կը զգացուի, բայց աւաղ
 որ ամ մը հայդուկներու մէկզմէ-
 կէ բաժնուիրն ալ, իւր աղքե-
 ցութիւնը կը կորսնցնէ, ջլա-

տումն ուժեց առաջ գալով, ա-
 հագին թրքական վայրագ գա-
 ւանային ուժեց զո՛հ պիտի ըլ-
 ւան. երբէք բան մը իսկ չը
 կրնալով ընել:

Փոքրաթիւ հայգուկային խում-
 բերուն՝ այդ երկու ահոելի հո-
 սանքներու մէջտեղ կեցած ինչ
 ընելը չի գիտցուիր. քանի որ
 մէկ կողմէն Մշոյ գաշտը՝ օր
 ըստ օրէ դէպի կործանում ա-
 ռաջնորդող ծրագրուածներն հա-
 կայաքայլ առաջ կը տարուին,
 Պիթիոսի եւ Մշոյ կուսակալի,
 Միւթէսարիֆի, պիտորական
 հրամ նատարներու ու քիւրտ
 համախոններու ձեռամբ. ամբողջ
 քիւրտ հաշիւէթներուն ու գազան
 համախոնէ պայայիններն ոտքի ե-
 լած, յարձակած տեղերն մոխիր
 կը դարձունեն, իսկ միւս կողմէն
 հայ գիւղացիներն ամեն տեղէ
 յոյսերին կտրած, մի միակ հայ-
 դուկի հրացանի գնդակին ապա-
 ինած՝ չորս կողմէն օդնութիւն
 օդնութիւն կը պտուան:

Ժողովրդեան պահանջին դո-
 հացում աւուր համար հայոց ու-
 կային երեք խումբերը վերջին
 ժողով մը եւս Հաւատորիկ եւ Ա-
 աջ գիւղերու մէջտեղ գտնուած
 մեծ ձորին մէջ ընելով, Մծմակ
 լեռան շղթան Անդրանիկին կը
 ձգեն որ Մուշէն բռնելով մին-
 չեւ Արգաւանց եւ Ուշաւա՛մ ինքն
 հսկէ, պահանջած տեղերն հա-
 նի, հարկը պահանջած միջոցին
 ժողովրդեան շահերն նա մանա-
 ւանդ կեանքը թանկ ծախելով,
 ամէն մէկ յարձակումի դէմ:

Ս. խմբագրութիւն կիլիսայ Քոստը
 լեռան շղթան, որ Տաղուք լե-
 ռան ստորոտ գտնուող Արտերդ,
 Սուլուխ, Խաշխախաղ, Ալիճան
 ու Յրօնք գիւղերէ բռնելով մին-
 չեւ Բըրկընոց ու Խօրիք գիւղե-
 րին հսկել, ամէն մէկ յարձակ-
 ման դիմադրելով: Քանի որ այդ
 տեղի Տ զօնք ու Քոստը լեռան
 շղթաներ Սայիտանցի աշիւթի
 բնակավայր ըլլալով, ազատ հա-
 մարձակ կարէին ու կը քանդէ-
 ին:

Իսկ Ղ. խմբագրութիւն կիլիսայ
 նամուրթ, որու մէկ կողմը կիլիսայ
 Պուլանը, միւս կողմը Խաշխաղ,
 երեսն ալ Մուշ եւ Պիթիոս:

(Շարունակելի)

Լուսոս 4 փետրուար

Անցեալները դիպուածաւ մը հան-
 դիպեցայ «Իրաւունք»ի վերջին թի-
 ւերէն մէկուն մէջ Լոնտոնէն թղթակ-
 ցութեան մը, պ. Մ. Գ. Սուգիկեանէ.
 Եւ առիթէն օգուտ քաղելով կուգամ
 մեր պատուարժան ընթերցողաց ներ-
 կայացնել քանի մը նշանակելի կէտեր,
 որք իրաւի, ըստ իս, բաւական ու-
 շագրութեան արժանի են:

Թղթակիցին բուն նպատակը ինչ է
 արդեօք, երբէք կարդացիք, Լոնտո-
 նի Հայոց Միացեալ ընկերութիւնը

վերջերս արևազարդ և արեգակնային մը
ուրեքներ է և ստորոգիտ օրակարգն է
եղեր ի միջի այլոց սինչպէս կարելի է
Լոնտոնի հայ գաղութին մէջ կրօնա-
կան հաւաքումներ հաստատելը, ու
գործադրարար ան ալ որոշ եզրակա-
ցութեան մը չէ հասած, ու վերջն ալ
կատարածը բարձրագոյնը սիրոյն
մէջ երկու բառ արտասանելու էն:

Չը պիտի համարձակէի հերքում մը
ընել, եթէ իրենց այդ հարցին հեղ
մը պատահած ջնջին շարժական նիւ
տը գրելու նիւթ ընելով ընթերցող-
ները ժամովաճառ չընէր պ. իզմա-
կիցը:

Փառք քեզ, Աստուած, Լոնտոնի
հայերն ալ բանի վրայ խորհիլ ու վի-
ճիլ գիտեն եղեր, սակայն ան ևս ա-
նաջինէն հասկնալ թէ ի՞նչ ջանքի ա-
սին—Լոնտոնի հայոց մէջ ի՞նչպէս կրօ-
նական հաւաքում մը հաստատել:
Սեղծ արարածներ, այլ ևս անհե-
ղին աւարտած ու իր գագաթնակէտին
հասած Լոնտոնի հայոց համար, ելած
են հոգևորական հաւաքումներ հաս-
տատելու: Ողորմելիներ, դուք որ
հայրենասիրական փոքրիկ միութիւն
մը յառաջ չէք կրնար կարգով ու
կանոնով տանիլ—ի՞նչպէս բացարձա-
կապէս սկսեալ է, ի՞նչպէս և ի՞նչ
մտքով կ'ընենք հաւաքում մը հաս-
տատել կուզէք, արդեօք քրիստոնէ-
կան ջերմաստաններէ մեր գրգռել—
ասոր պատասխանը մենք չենք տար,
բայց միայն սա յիշենք որ Լոնտոնի
հայերը, հակառակ ամեն դիւրու-
թեանց, չորս պատերէ կազմուած
չէնք մը չունին իբրև հայկական մա-
տուռ կամ բան մը, ու Մանչեսթըրի
առաջնորդ տարին քանի մը անգամ
գալով, մտաբանած մը վարձուած
մատրան մը մէջ կը պատրաստէ: Ա-
հա Լոնտոնի հայոց կրօնասիրու-
թեան ու կրօնական զգացման աստի-
ճանը, որ պ. Սոգիլեան շատ լա-
գիտանալով հանգիստ լուծեմամբ կանց-
նի, վաճառի իր հարգածներն ևս
պէտք եղածին չափ մարտը չեն:

Բայց չէ, յօդուած գրելու մար-
մաջէն բռնուած ճարտիկ պարտնը նա-
խատեսելու չենք, ան սերիչ նպատակ
ուրիշ... Վերաբերելու մէջ երբեմն
ընկող խելքը կ'անակիլն վրայ կար-
կուտանը յուզուած քանի մը բառեր
արտասանել է իտիքնէի մէջ կատա-
ղան բարձրագոյնը մասին—պէտք
չէ Միւսի մտապահութեան դատար-
տենք այն քաջարի հերոսներուն յի-
շատակը որոնք ազատութեան և ի-
րաւունքի սիրոյն, վերջերս կատա-
ղան բարձրագոյնը իտիքնէի մէջ...
(հապա...)

Որքան ազգասիրութիւն! ամօթ
չէ՞ր այդպիսիներու անմահ յիշատակը
երկու խօսքով մէկ կողմ նետել, մինչ-
դեռ ուրիշներ հագնանքիստներ և այլ
նման գոհողութիւններ ըրին ու կը-
նեն, ուսանց անոնց ունեցած պատե-
հութիւններն ևս ունենալու: Պիտի
յորդորէի Լոնտոնի և ուրիշ ընկերու-
թիւններ ու անհատներ, որոնք զա-
ցան—ուրախալի է ընել շատ քիչը—
իրենց անվեհեր հերոսներուն յիշա-
տակը յարգել, հիմա թո՛ղ չը խորհին,
չը խուսափին քանի որ երկրորդ պա-
տեհութիւն մը կը ներկայացնէ իրենց
առջև—այն է աջակցիլ «ՇՍԹՈՒՄ»-ի
ձեռնարկած գործին, իրենց մեծ և
պզտիկ—կարողութեան համեմատ—
նուիրատուութիւններով, վաճառի մի-
միայն Պետտեր Օննիկներ, Անդ-
րանիկներ ու ամէնուն պարագլուխ
Սէրբ բաշաներ են որ ապագայ հա-
յուկական արիւնտները պատմութեան
շող մը ու փայլ մը պիտի ընծայեն և
յիշեցնեն կարմիր ալ զիւցազնական
անցեալ մը:

ՅՈՒՅՆ

ԳԺԳՈՂ

Գ.

Բարեկամս վերջին խորհուրդը ին-
ծի բառական յայտարարութեան
ցաւ: Ի՞նչ աղէկ բան: յեղափոխ-
կան գոյժ չը պիտի կատարեմ, զոհո-
ղութիւն մը չը պիտի բնեմ, գրգա-
նէս փարսոյ մը չը պիտի ծախսեմ,
բնդհակառակը ուրիշներէն շորթած
ստակով պիտի ապրիմ, պիտի ձամ-
բորդեմ, Պուրկարիս, Յունաստան,
Եգիպտոս և մինչև անգամ Ամերիկա:
Այդ խորհուրդին վրայ ըստովին հան-
գատուած—իսկոյն գացի տուն, նա-
տայ սեղանիս առջև: Բացի գա-
րուն, հանեցի յուշատետրս, որուն
պատճէր արդէն արտասուածն զրկած
եմ, և բոլորական լեզուով մը, օտար
անունով յարտարակելու համար, մէ-
ջին փոստի թուղթ մը հանեցի, մենծ
թուղթ մը և հետեւեալ նամակ գրե-
ցի:

Պար. Գ. ին — Ի Դանուփ- ի ափ
Մեծասքանչազգասէր Տէր տէր Գիւմ,
Հայաթուրք լրագրի մը

Մէջ կարգաւոր յայտարարութիւն
մը, իմացայ որ ձեր ոնմակին մէջ
մտնելու, կամ անոր հետ բանակցելու
համար, պէտք է ձեր հերոսական ազ-
գասիրութեանը դիմել:

Ես առաջարկներ ունիմ ընկիւք ձե-
զի կարեւոր ու օգտակար, բայց չեմ
կրնար գրաւոր կերպով հաղորդել:
Ուստի վաղան թրջնով պիտի մեկնիմ
դէպի Ձերոյ մեծասքանչ ազգասիրու-
թիւնը երես առ երես—դէմ առ դէմ
խօսակցելու շատ մը կարեւոր նիւթե-
րու մասին, որոնցմով Հայաստանը
անիրաւիութիւններէ պիտի փրկուի:

Յուսով եմ որ կայարանը զիս պի-
տի դիմադրէք: Իմ մարմնոյս և դէմ-
քիս նկարագրութիւնը ընելու պէտք
մը չը կայ, ամբողջ հայոց աշխարհ,
ժողովուրդ զիս կը ճանչէ, բունա-
կրէն մինչև կաթողիկոս:

Ձերոյ
ԳԺԳՈՂ

Նամակը գրելէս յետոյ, առանց
ժամանակ անցնելու, տունէն դուրս ե-
լայ և զվանջի փոստս:

Նամակը փոստան ձգելէս վերջը,
վերագրածայ տուն քնանալու: Կէս
քուն, կէս արթուն, սկսայ տեսակ
տեսակ երազներ անալ. մէկ մը կը
տեսնամ որ պատգամաւոր կերթում
յեղափոխական կուսակցութիւնները
միացնելու, ու տեղ հասածիս պէս կը
սկսիմ, աչքերուս միանուն քնքրու-
թիւնութեան, արտասուել. մէկ ալ
կը տեսնամ որ ես տաճկական պաշ-
տօնական ամէն թուղթերը պատե-
լով Հայաստանը ազատեցի ու զիս ալ
Հայոց թագաւոր կարգեցին: Բայց
ամենէն գէշը ան եղաւ որ, դեռ հա-
զիւ թագը զլիւսու գրած էի, երբ
մէկ մը զիմացս լլաւ, ու «պուշ»
կոչելով զիս, զարկաւ և թագս վար-
նետեց: Աւա՛ղ, ապերախտ հայուն
զաւակը սոցաւ իւրագաւտարարը...:

Բերանս բացի որ հայոցիմ այդ
լպիւր հայը, սակայն ան ձեռքս տոյ
լէ՛Ք տուաւ, ու ըսաւ. ձայնդ կտրէ
«պուշ». ես խմբագիր եմ, վաղը
յոզուած մը կը ներքեմ քեզի—և հայոց
ամենէն մեծ հերոսը կը հաշակեմ:
Ալ ինչ կուզես:

Տար լէ՛Ք և մեծ հերոս արողո-
ւր ամէն վիրաւորանք մուցնել տուի
ու ես աշխուհետեւ հանգիստ
քնացայ, միւս օրը պ. Գէմին քով եր-
թալու վառ յոյսերով օրօրուած:

Մ.

ՆՈՒՅՆ, ԵՐԳԵՐ

Յիւրիպէի Հայկ. Երգեցիկ խում-
բը պատրաստ ունի հետեւեալ
բառաձայն երգերը:

«Մեր Հայրենիք», «Մայր Ա-
րագահ», և «Զինգիլիսին ֆաթէն
կիրամ», «Լուսն ամպերը», (Կա-
րա Մուրզա), «Ի մարտ—բաւ է
սրբան», «Վրէժ—թող կորնչին»
մէկական երես 15 սանթիմ:

«Արիք Հայկապոնք», «Ես լը-
սեցի մի անուշ ձայն», և «Օյնա-
պան»—ժողովրդական պարերգ—
(Կարա Մուրզա) երկու քական ե-
րես 30 սանթիմ:

«Ռազմերգ—Հայ կըրպիւնները»
3 երես 45 սանթիմ:

«Ինչպէք տեսէք ս'յ է կերել
դէմ և «Լեփօ լէ լէ»—ժողովր-
դական պարերգ—(Կարա Մուրզա)
«Կախաղան»—երկու սթոն ելաւ
4ական 5 երես 60ական սանթիմ:

Արտասահմանի համար մէկ ե-
րեսը 20 սանթիմ:

Յիւրիպէ Հայկ. Երգ.—քաւս. Խոսեր
Հասցէ

Յակոբ Սրվաճեան
(Յիւրիպոլ)

ԱԶԳԱՅԻՆ ԲՈՂՆԻԿ

Ստուգանք հայ կանանց ամսա-
գիրը—«Արուճիկ»:

Միւս անգամ կը խօսինք մեր
կանանց այդ առաջին ամսագրին
բովանդակութեան և թողած ար-
պաւորութեան մասին: Իսկ մե-
զին տարեկան 12 ֆր.:

Հասցէն է
Բոսթրէսդանց, Գոհիթէ (Ե-
գիպտոս):

—Վարնայի Պ. Նահանգապետը
անշնորհները այցելեց մեր եկե-
ցին, այսինքն փոխադարձ այցե-
լուծիւն տուաւ թաղականու-
թեան: Մեր թրքական մէտրէ-
սէն զուրս ելած խմբագիրը,
յիւրիւքը թուրքիս կարծելով,
յարձակեցաւ ազգային իշխանու-
թեանց վրայ լծել ի՞նչու Պարոն
Նահանգապետը չեն հիւրասի-
րած:

Մէտրէսէի այդ սանը, այս
քան ժամանակ Պուլկարիոյ մէջ
ապրելով, դեռ չէ կրցեր հասկը-
նալ որ Պուլկարիոյ նահանգա-
պետները թուրք վարիներ չեն,
և զանոնք վիրաւորած պիտի ըլ-
լանք, եթէ թուրք վարիներու
պէս անտեղի պատուենք: Եթէ
պարոն Նահանգապետին համար
հիւրասիրութիւնը չնչին իսկ նը-
շանակութիւն մը ունենայ, այն
ատեն ինք ալ, մեր ազգին ներ-
կայացուցիչները պիտի պատու-
ասիրած ըլլար զինքն այցելած
միջոցին: Հաւատացած ենք թէ
Պ. Նահանգապետը քննող խմբա-

րին վարժուողը եթէ իմանայ,
նողկանք պիտի զգայ:

—Կաթուղիկոսը հետագրով մը
Պատրիարքարանի իմացուցեր է
Շամախի քաղաքին սոսկալի երկ-
րաշարժը և անոր պատճառած
մեծ ֆետաներու մասին:

Երոպական լեռնաշղթայի կիմա-
նանք որ մինչև հիմա մտա հա-
զար գիւղերը հանուած են փլա-
տակներու տակէն:

—Նոր Նախիջեւանէ 1210 ըպ-
չրկուեր է Պատրիարքարան կար-
նոյ արկածելոց համար:

—Պատրիարքարանէ գաւառա-
կան առաջնորդներուն շրջաբե-
րականները զրկուեցան, որ ար-
գիլեն անշարժաւ խօսեցեալ-
ներու ամուսնութիւնը, բայց օ-
րինազանցութիւն տեղի ունեցեր
է նոյն իսկ Պատրիարքարանի մօ-
տիկ Թաղի մը մէջ:

—Էսկի շէշիրի ազգային վար-
ժարան, ն վերաշինութեան հա-
մար 300 ոսկի հանգանակուեր է:

—Կիպրոսի որբանոցին անները
փախագելով օգնել կարնոյ ար-
կածելոց, մէկ քանի անգամ սի-
րայօժար զրկուեր են իրենց ճա-
չէն և տոտր փոխարէն մէկ անգ-
լիական ոսկի զրկեր են Պատրի-
արքարան:

Կարգացէք, լսեցէք, անսիրտ
ու յիպացած հարուստ հայեր:

—Պարոն յայտնի բարեգործ
Պուտաղեան եկարայները 1000
րուպլի նուիրեր են Սպիտակի
վանքին:

—Կովիլի բողոքական հայերը
50 ոսկի հանգանակուեր են ինք-
պատ կարնոյ արկածելոց:

—Ռոտտոթոյի առաջնորդ Ներ-
սէս եպիսկոպոս Ասլանեան սկսեր
է, կիրակի օրերը, կէս օրէն
եաքը ժողովուրդը եկեղեցի հը-
րուիրել և խրատներ խօսիլ: Ա-
ռաջին ճառը եկած է ուղղամտու
թեան մասին: Երկու սեռէն ալ
մեծ բազմութիւն գտնուեր է,
եպիսկոպոսը որոշած է ուրիշ կա-
րող անձեր ալ ճառելու հրաւի-
րել. պայմանով որ ճառերը գը-
րատու ըլլան և ինր կանխաւ տես
նէ:

—Ամաւիոյ մէջ ազգ. լսարան
մը բացուեր է նախագահու-
թեամբ առաջնորդին:

Առաջնորդը խօսեր է լսարա-
նին օգուտներուն վրայ, Ռերիչ-
ներ ալ խօսեր են, իսկ զպրոցա-
կան աշակերտները երգեր են:

—Լոնտոնի որբանոցում 46 անգ-
լիական ոսկի զրկելով Պատրիար-
քին ծանուցած է թէ ասկէ վեր-
ջը կը դադրի նպատաստութիւն
խարբերի որբանոցը: Ասոր վրայ

նպատակը, յանձնաժողովը որոշած է գրել այդ որբունցի հողաբարձութեան թէ՛ տեղական միջոցներով մատակարարեն, իսկ Լուսինի որբանամին ալ պիտի դրուի թէ իրենց հաշտոյն 150 ոսկու վճարում եղած է յիշեալ որբանոցին, որով այդ մարմինը տակաւին պարտական կը մնայ:

— Կտուր թէ Պոլսոյ նաւը գարուի թաղէն Զարար անունով անժառանգ աղքատին մը Կեորգ Եպիսկոպոս երէցեանի միջնորդութեամբ՝ իր ունեցած երեք տուները, 1200 լիբրայի արծաղութեամբ, մտտերս ազգ. Հիւանդանոցի վրայ փոխանցելու խնդիրը ըրած է. սա պայմանով որ իր և կնոջ մահէն յետոյ այդ տուները Փրկիչին սեփականութիւններ ըլլան:

— Լտանացի տիկին մը, Մարթա Գասպարեան իր 100 ոսկինոց տունը կտակել է Սսի կաթողիկոսութեան:

— Մաշտոց վարդապետ Նիւեօրբի և Յիլատալֆիոյ մէջ 63 օսմանեան ոսկի հանգանակեր է ի նպատակարարն արկածելոց և պատրիարքարան զրկելու:

ՆԱՄԱԿ ԽՐԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Իբրև Եմուլայի Հայկ. ընթերցարանի վարչութիւն ատենադպիրը, կուգամ այս երկտուղի. հաստատելու թէ՛ Պետոպուլիարացի ընթերցարանի վարչութեան կողմանէ լրագրոյդ մէջ մեզի ուղղուած հարցումներուն իբրև պատասխան, վարչութեանս կողմանէ տրուած խուսափողական պատասխանին համար չեմ. թէեւ ստորագրած եմ. ինչպէս որ համարիտ չըլլալս ժողովքին մէջ ալ բացարձակապէս յայտնուած եմ:

Հիմա, ասոնց ալ և այլ կուսակցական նկատումներու յանուն ճշմարտութեան և հանրային բարօրականի, կը յայտարարեմ թէ Եմուլայի Հայկ. ընթերցարանի նախկին վարչութեան 3 անդամները վաճառուած չեն այլ իրենց յոժար կամքով հրաժարեալ են. ուստի այս ճշմարտութեան հակառակ մասնակի նամակներ և անոնց յենով «Իրաւունք» թերթը ինչ որ գրած են սուտ և զրպարտութիւն է:

Մնամ յարգանք
Եմուլայի Հայկ. ընթերցարանի
արդի վարչութեան Ատենադպիրը
Պօղոս Յ. Էսայ աշակեան
1902 փետր. 12
Եմուլա

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Վեց մարդ է բաղկացեալ Պօսնացի տաճիկ պատգամաւորութիւն մը հասած է Պոլիս և Սուլթանին հաշտոյն ատաղճակարգ պանդոկ մը իջեւանած. քիչ յետոյ պալատը հրաւիրուած են. թիւրք պաշտօնական շրջանակաց մէջ գրեթէ տրամագրութիւն չը տեսնուիր՝ բան մը յայտնելու պատուիրակութեան նպատակի մասին, սակայն մասնաւոր ազբերներու նայելով պատուիրակութեան նպատակն է եղեր անուանապէս միայն թուրքիոյ վերաբերեալ Պօսնա—Հէրցէկովին նահանգաց քաղաքական վիճակը վերջնապէս ճշգրտաւոր համար խորհրդակցել:

Կարծողներ ալ կան որ գաղթականաց համար եկած է պատգամաւորութիւնը:

— Բ. Իուսը նոթա մը տուած է տէրութեանց, որով կարգիլէ օտարահպատակներու թուրքիոյ շուրթին մէջ ձկնորսութիւնը, թրիպօլի խնդրէն ծագում առած է կըսուի այս նոթան և ուղղուած է մասնաւորապէս Խաւիլոյ և Անգղիոյ դէմ, որովհետեւ թուրքիոյ մէջ իտալացիք և անգղիացիք ամենէն աւելի ձուկ կորսան:

Տէրութեանց թարգմաններ հաւաքումներ կընեն նայելու թէ կա՞յ արդեօք դաշնագրութեանց դէմ բռնաբարում մը:

— Ալպանացիներու պիտերէն և օլլա Զէզգի իր հակառակորդներէն պաննուած է:

— Հաշակաւոր Տէլի Թուատ փաշան Սուլթանը աքսորել է— Պէյլուի, այնտեղ զօրաց հրամանատար կարգելով. Աքսորը հետեւեալ պատճառով տեղի ունեցեր է. Պօլսոյ կոտորածներէն յետոյ, որուն միջոցին Թուատ հայերը պաշտպանեց. Սուլթանի լրտեսները միշտ զայն կը լրտեսէին. Թուատ քանի մը անգամ լրտեսները կը հայհոյէ և ոտականութեան նախարարին ալ կը յայտարարէ որ ատ անպիտանները հեռացնէ, Բայց մտիկ չեն ընել, որ մըն ալ Թուատ կերթայ տասը ընթացիկ կառնէ, ու կը բերէ իր ծառաներուն կը բաժնէ հրամայելով որ եթէ տանքով լրտեսներ տեսնան զարնեն, Զնցեալ որ ինքը անձամբ կը տեսայ որ իր տան քով լրտեսները աւելի շտտցեր են, ծառաներու հետ միտին անոնց ետեւէն կիչնայ և ինք քանի մը հատ կըսպաննէ. Ատոր վրայ պալատ կը կանչուի և Սուլթանական զբօսանալով կարտորուի:

Պուլկար թերթ մը կը հաղորդէ որ ֆրանսական զեպան Բօսնիան պահանջած է Թուատը ետ գարձեն:

նոթան պահանջած է Թուատը ետ գարձեն:

— Պուլկարական թերթ մը կը յաղորդէ որ ուսուցիչական ալբուլոքեր էմուատ բաշան աքսորելու համար. Սուլթան խոստացեր է որ բաշայի կեանքին վնաս մը չը պիտի գայ:

— Պուլկարական թերթերը կը հաստատեն որ վերջապէս Միս Սթօնը և իր ընկ բուհին Յիլկան ազատուելու են:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Իէթէրսպուլի մէջ կրկին ըսկսեր են ուսանողներ ձեռքաւորել, վախնալով որ մօտակայ համալսարանական տոներուն խոզվութիւններ տեղի պիտի ունենան:

— Ռուս կառավարութիւնը 15 միլիոն լուպլի նշանակել է նաւատորմի զօրացնելու համար:

— Շամախի երկրաշարժի րպատ ճառով 25000 հողի առանց բնակարանի մնացել են. Չարը իր անձնական գանձէն արկածելոց համար 20000 լուպլի նուիրել է:

Ս Պ Ա Ն Ի Ա

Բարսիլոնայի նոր քաղաքապետը խիստ միջոցներ ձեռք առել է քաղաքը հանգստացնելու համար. Գաղաքացիներուն հրամայել է որ ամենք էլ իրենց ունեցած գէնքերը կառավարութեան պիտի յանձնեն. Քանի մը գործարաններու մէջ աշխատութիւնը սկսուել է. ձիաքարչի քանի մը գծերուն վրայ երթեւեկը սկսել է:

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Միացեալ նահանգներու և Ռուսիոյ յարաբերութիւնները բաւական լարուած են. Մանչուրիոյ պատճառաւ. այնպէս որ Միացեալ նահանգներու կառավարութիւնը լլթիմաթուսի մը պէս յիշատակագիր մը տուել է Ռուսիոյ. Յիշատակագիրը յանձնած է ուսուցիչական կառավարութեան փետրվար մէկին, որուն մէջ կըսէ թէ՛ Միացեալ նահանգները տհաճութեամբ պիտի նային թէ Ռուսիա Զինաստանի հետ մասնաւոր համաձայնութեան մը յանդի Մանչուրիոյ մէջ երկաթուղային և հանքային առանձնաշնորհումներ ունենալու համար. Այդպիսի համաձայնութիւն մը պիտի խորտակէ մեծ պետութիւններու մէջ կայացած համաձայնութիւնը. և պիտի ստիպէ որ միւս պետութիւններն ալ նոյնանման պահանջներ ընեն Զինաստանի միւս մասերու վերաբերմամբ. Յիշատակագիրը կաւելցնէ որ առանձնաշնորհում-

ներու համաձայնութիւնը կը հակասէ Ռուսիոյ վստահացումներուն թէ ինք ալ «բայ դուռնեւ» րուս քաղաքականութեան պիտի հետեւի:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Կեղծ մարքաներու գործը քննող հարցաքննիչ գետաւորը քննութիւնը արդէն վերջացուցեր է. Բոլոր կարեւոր ամնատանեալները խոշոր գումարներու երաշխաւորութեամբ ազատ արձակուած են մինչեւ գատերնին տեսնուիր:

ԹԱՏՐՈՆ „ՍԱՆԴՐԱԼ“

Յառաջիկայ ուրբաթ զիշեր ժամը 9ին թատերասէր Կրիտասարգաց կողմանէ պիտի ներկայացուի:

ԶԷՅԹՈՒՆԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Ողբերգութիւն 5 արար և 1 կենդանի պատկեր
Գիներ Ա. կարգ. ըստ կամս. Ա. կարգ 1ու կէս ֆր. Բ. կարգ 1 ֆր. Գ. կարգ 50 սնթ.
Օթեակներ. թիւ 1 10 ֆր. 2, 3 թիւեր 8 ֆր. 4 5 7 ֆր. 6 7 5 ֆրանք.
ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՍՐԴՈՒԹԻՒՆ

L'EUROPEEN

Շարժաթերթ քաղաքական, միջազգային իրաւունքի, բնկերական հարցերու, գրական և գեղարուեստական:
Տարեկան 15 ֆր.
Վեցամսեայ 8 ֆր.
Հասցէ 24 rue Dauphine Paris VI

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ՇԱՐՇՈՒՄ“

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցետոմս, նամակագրութիւն, հարսանեկան հրատարակիչ, մահազգ:
Գիները յոյժ գիւրամատչելի:
Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:
ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆՈՒՆ

Գ Ո Ւ Թ Ա Ն

Հանդիս ամսեայ, հողագործական, գիտական և արուեստագիտական
Հիմնադիր տնօրէն
Գարեգին Ը. Մեծաստեան
Հրատարակուած է Ը.րգ թիւը, շահեկան բովանդակութեամբ:
Տարեկան բաժնեգին 12 ֆր. զիմն հիմնադրին, 23 rue de la Océanographie

ОТГОВОРНИКЪ :

Мурадъ-Ераносянъ
Печ. Взаимность — Варна